ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2023 թվականի N 1207-Ա

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման հավելվածի 5-րդ և 6-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից մինչև 2027 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից մինչև 2025 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից սկսած մինչև 26 տարին լրանալը տարկետում տալ՝

1) Ռուդիկ Սեյրանի Մկրտչյանին (ծնվ.՝ 1998 թվականի հոկտեմբերի 26-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Շինարարների փ., շ. 3, բն. 11, Արթիկի ՋԿ)՝ ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքական թիմի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի N 1190-Ա որոշմամբ՝ մինչև 2023 թվականի ամառային զորակոչը).

2) Հրաչիկ Արայիկի Գևորգյանին (ծնվ.՝ 1998 թվականի հուլիսի 24-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Քաղցրաշեն, Մ. Նալբանդյան փ., տ. 22, Արարատի մարզի ՋԿ)՝ ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքական թիմի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի N 1186-Ա որոշմամբ՝ մինչև 2023 թվականի ամառային զորակոչը).

3) Մարկ Տարոնի Գրիգորյանին (ծնվ.՝ 1998 թվականի հուլիսի 18-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գեղարքունիքի մարզի ՋԿ)՝ ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքական թիմի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի N 1186-Ա որոշմամբ՝ մինչև 2023 թվականի ամառային զորակոչը).

4) Վարազդատ Արայի Լալայանին (ծնվ.՝ 1999 թվականի մայիսի 1-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակշին 3 բան., Մոդուլ 5, բն. 2, Շիրակի մարզի ՋԿ)՝ ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է, ծանրամարտի մեծահասակների աշխարհի 2022 թվականի առաջնության՝ 3-րդ մրցանակակիր.

5) Արմեն Նորիկի Գրիգորյանին (ծնվ.՝ 2000 թվականի ապրիլի 15-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, Վ. Սարգսյան փ., շ. 9, բն. 31, Կոտայքի մարզի ՋԿ)՝ ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 4-րդ մրցանակակիր է.

6) Արա Անդրանիկի Աղանյանին (ծնվ.՝ 2000 թվականի մայիսի 25-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Լիսինյան փ., տ. 5/2, Շիրակի մարզի ՋԿ)՝ ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է.

7) Հրաչյա Գևորգի Պողոսյանին (ծնվ.՝ 1999 թվականի մարտի 5-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Խորոնք, Վ. Վարդանյան փ., տ. 50, Էջմիածնի ՔԿ)՝ հունահռոմեական ըմբշամարտի մինչև 23 տարեկանների (Մ-23) աշխարհի 2021 և 2022 թվականների առաջնությունների 3-րդ մրցանակակիր է, հունահռոմեական ըմբշամարտի մինչև 23 տարեկանների (Մ-23) Եվրոպայի 2021 թվականի առաջնության հաղթող է՝ 1-ին մրցանակակիր.

8) Գևորգ Վարդանեսի Թադևոսյանին (ծնվ.՝ 1999 թվականի օգոստոսի 21-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Խորոնք, Գարեգին Նժդեհի փ., տ. 37, Արմավիրի մարզի ՔԿ)՝ հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների (Մ-23) Եվրոպայի 2021 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր է, հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների (Մ-23) աշխարհի 2022 թվականի առաջնության՝ 2-րդ մրցանակակիր.

9) Կարեն Սիրեկանի Մարգարյանին (ծնվ.՝ 2001 թվականի ապրիլի 26-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գեղակերտ, Իսահակյանի փ., տ. 15, Արմավիրի մարզի ՔԿ)՝ ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 4-րդ մրցանակակիր է.

10) Արթուր Վահեի Շախպազյանին (ծնվ.՝ 2001 թվականի ապրիլի 29-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 2 ՔՇՀ 3, շ. 14, բն. 18, Վանաձորի ՔԿ)՝ բռնցքամարտի մինչև 22 տարեկանների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է.

11) Ռաֆայել Գեղամի Հովհաննիսյանին (ծնվ.՝ 2001 թվականի հունիսի 16-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Շերամի փ., շ. 19, բն. 16, Երևանի N 1 ՔԿ)՝ բռնցքամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է.

12) Շանթ Արտակի Խաչատրյանին (ծնվ.՝ 2001 թվականի փետրվարի 7-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վարդանանց փ., տ. 8/2, Աշտարակի ՔԿ)՝ հունահռոմեական ըմբշամարտի մինչև 23 տարեկանների (Մ-23) աշխարհի 2021 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր է, հունահռոմեական ըմբշամարտի մինչև 23 տարեկանների (Մ-23) Եվրոպայի 2022 թվականի առաջնության

3-րդ մրցանակակիր է, հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների աշխարհի 2019 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր.

13) Նարեկ Արմենի Հարությունյանին (ծնվ.՝ 2001 թվականի հունիսի 13-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, 10 փ., տ. 30, Արմավիրի ՋԿ)՝ ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդների Եվրոպայի 2021 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր է, ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդների (Մ-23) Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր.

14) Մանվել Արծվիկի Խնձրցյանին (ծնվ.՝ 2001 թվականի հունվարի 26-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ազատան, 1 փ., տ. 126, Շիրակի մարզի ՋԿ)՝ ազատ ոճի ըմբշամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր է, ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդների և մինչև 23 տարեկանների (Մ-23) աշխարհի 2021 թվականի առաջնությունների 3-րդ մրցանակակիր.

15) Սահակ Մարատի Հովհաննիսյանին (ծնվ.՝ 2001 թվականի հունվարի 20-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Տերյան փ., տ. 45, Աշտարակի ՋԿ)՝ հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների աշխարհի 2021 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է, հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների (Մ-23) Եվրոպայի 2022 թվականի առաջնության՝ 3-րդ մրցանակակիր.

16) Կարեն Խաչատուրի Խաչատրյանին (ծնվ.՝ 2001 թվականի հունվարի 20-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, տնակ 237/705, Գյումրիի ՋԿ)՝ հունահռոմեական ըմբշամարտի երիտասարդների աշխարհի 2021 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ